

Ա. Ի. ՄԵԳՆԱԳՅՈՒԿ

ԳԻՆԸ 17 ԿՈՊ  
Цена 17 Коп

**ԱՇՆԱՆԱՑԱՆԻ  
ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱՆ**

633  
Մ-42

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ,

**1933**

ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ

633  
Կ-42

Ա. Ի. ՄԵԴԿԵԴՉՈՒԿ

04 AUG 2010

ՄԵԻՐ. ԿՈՍԵՆՏԱՆԿԱ ՄԻՐ  
000. 574 1/2

631.52

# ԱՆՆԱՆԱՑԱՆԻ ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱՆ



ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ «ՇՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ»  
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ 1933

26.06.2013

15.432



43137-63

## ԱՇՆԱՆԱԳԱՆԻ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշնանացան հացահատիկները Հյուսիսային Կովկասի հիմնական հասկային կուլտուրաներն են: Մեր յերկրամասը ԽՍՀՄ-յան աշնանացան ցորենի գլխավոր ոռոգողներից մեկն է:

ՀԿ(Ը)Յ Յերկրային Կոմիտեյի և Յերկրային Գործկոմի հաստատած պլանի համաձայն, Հյուսիսային Կովկասը 1933 թվի աշնանը պարտական է ցանել 3,940 հազար հեկտար, վորոնց թվում՝

Աշնանացան ցորեն . . .	3,024	հազար հեկտար
Աշնանացան հաճար . . .	825	» »
Աշնանացան գարի . . .	81	» »

Ահա թե ինչու աշնանացանի հաջող կատարումը խոշոր նշանակություն ունի: Ահա թե ինչու կուլտեսուլթյունների Մ ՏԿ և խորհրդատեսուլթյունների ամբողջ ուշադրությունը, բոլոր ույժերը պետք է գործ դնեն աշնանացանի պլանն իր ժամանակին և լավ կերպով կատարելու համար, հաջող կերպով հարմարեցնելով այն՝ հացամթերման կոմպանիայի և աշնանավարի հետ:

Կուլտեսուլթյան և հակախորհրդային տարրերի կազմակերպած սարքաժի ջախջախման հետևանքով, քաղբաժինների ստեղծման, կուլտեսուլթյունների ամրապնդման և կուլտեսուլթական լայն մասսաների ընկ. Ստալինի—կուլտեսուլթյունները դարձնել բուրգահիլյան, իսկ կուլտեսուլթականներին՝ ունևոր—լոզունգի շուրջը մորիլիզացիայի յենթարկելու հետե-

վանքով, Հյուսիսային Կովկասը հաջող է ավելի լավ վորակի  
ցուցանիշներով, կատարեց գարնանացանը քան 1932 թ.:

Գարնանացանի հաջողութունները պետք է ամրապնդ-  
վեն աշնանացանի ընթացքում նրանով, վորպեսզի հետևյալ  
տարին էլ ավելի շատ բերք ստացվի, քան այս տարի:

Դրանումն է կայանում աշնանացանի քաղաքական է  
տնտեսական խոշոր նշանակութունը:

Ձարդ ու փշուր յեղած կուլակության և հակախորհրդային  
տարրերի մնացորդները պետք է փորձեն խոչնտոտ հանդի-  
սանալ և կասեցնել աշնանացանի հաջող կատարումը:

Դասակարգային զգոնության բարձրացմամբ, կուլակ ու  
ֆլասարար տարրերի աշնանացանը հաջող կատարելը կասեց-  
ման փորձերի դեմ անհաշտ կռվով, աշնանացանի աշխատանք-  
ները հաջող կերպով զուգորդելով հացամթերման, ուշ հասնող  
կուլտուրաների հավաքմանը և աշնանավարի կատարման  
հետ մեր յերկրային կոլտնտեսություններն ու խորհրտնտե-  
սությունները պետք է ապահովեն աշնանացանի հաջող կա-  
տարումը և ժամանակի և ցանքսի վորակի տեսակետից:

Բացի այդ, չպետք է մոռանալ, վոր աշնանացանի պլանի  
հաջող կատարումը խոշոր չափով կհեշտացնի հաջորդ տարվա  
գարնանացանի կատարումը: Այն ինչ վոր անհրաժեշտ է  
կատարել աշնանը, պետք է կատարել լիովին առանց ցանը  
թերի թողնելու: Թերի թողած ցանը և ցածավորակ աշնանա-  
ցանքսը պետք է դիտել վորպես աշնանացանի պլանի կա-  
տարման համար մղվող բողբոջի պայքարի բացակայու-  
թյուն՝ այն կոլտնտեսությունների և խորհրտնտեսություն-  
ների մեջ, վորտեղ կնկատվի այդ:

Աշնանացանի կամպանիան յերկրային կոլտնտեսություն-  
ները և խորհրտնտեսությունները պետք է անցկացնեն ավելի  
մեծ ննարավորությունների մեջ: Այդ հանգամանքը պար-  
տավորեցնում է մեզ թույլ չտալ ցածավորակ աշխատանք  
աշնանացանի պլանի կատարման ժամանակ:

## ԱՇՆԱՆԱՅԱՆ ՀԱՅԱՀԱՏԻԿՆԵՐԻ ԲԱՐՁՐ ՅԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՆ ԲԵՐԲ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Փորձնական դաշտերում կատարվող յերկարատե դիտո-  
ղությունները և առաջավոր խորհրտնտեսությունների ու կուլ-  
տնտեսությունների պրակտիկան ապացուցել են, վոր աշ-  
նանացանի հացահատիկների բարձր և հաստատուն բերք  
ստանալու գործում վորոշակի նշանակություն ունի կանո-  
նավոր կատարված ցանքսը:

Դիտողություններով հաստատված է, վոր կարելի յե ունե-  
նալ լավ պատրաստված հողամաս և ընտիր տեսակի սերմա-  
ցուններ, բայց անկանոն ցանքսի դեպքում բերքն ուժեղ չա-  
փով պակասում է և յերբեմն նկատվում է նաև աշնանա-  
ցանքսի ֆլասում ձմեռելու ժամանակ:

Բոլորովին ակնհայտնի յե, վոր աշնանացանի հացահատիկ-  
ների բարձր և հաստատուն բերք ստանալու և նրանց ան-  
ֆլաս ձմեռելը ապահովելու համար, պետք է կանոնավոր  
կերպով զուգորդել հողամասի աշնանացանի համար նախա-  
մշակումը ցանքսի կանոնավոր ազրոտելնիկայի հետ:

Աշնանացանի հացահատիկների բարձր և հաստատուն  
բերք ստանալու հիմնական պայմանները նրանց ցանելու  
ընթացքում հետևյալներն են.

1. Աշնանացանի համար հողամասի նախնական մշակու-  
մը, ինկատի ունենալով, թե այդ հողամասերն անցյալ

տարին ինչով են ցանված յեղել և ինչ մուխոտերով աղտոտված:

2. Հացահատիկների պատրաստումը ցանքսի համար:
3. Ցանքսի ձևերը:
4. Հացահատիկների հողի մեջ թաղելու խորությունը:
5. Ցանքսի ժամանակամիջոցը և սերմացունների նորման:

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆԱԽԱՅԱՆՅԱՆ ՄՇԱԿՈՒՄԸ

Աշնանացան հացահատիկների համար հողամասի նախնական մշակումը նպատակ ունի ապահովել սերմերի հողի մեջ տեղավորելու լավագույն պայմանը և բույսի լավագույն աճումը ցանելուց հետո:

Հողամասի նախամշակումը լինում է զանազան տեսակ, նայած թե ինչով է ցանված յեղել այդ հողամասը առաջ, ինչ տեսակի հող է և վորքան է կեղտոտված մուխոտերով:

Լավ մշակված ցելերում յեթե լավ հող տարված է նրանց և ազատ են մուխոտերից, աշնանացանից առաջ վոչ մի վերամշակում չի պահանջվում:

Սակայն յեթե մոտավորապես 10—15 որ ցանքսից առաջ հաստատվի, վոր հանդիստ թողած հողամասը բուսած է մուխոտերով և հողի վերին շերտը ծածկված է ամուր կեղևով, այդ դեպքում այդպիսի հողամասը պետք է կեղևահան գործիքով արոտները կտրատել և հետո տափանել՝ կտրտված մուխոտերը հեռացնելու համար:

Յեթե ցելերի հողամասը համեմատաբար մաքուր է մուխոտերից, բայց հողի մակերեսին կա խիստ ամուր կեղև, այն ժամանակ, վորպեսզի ցանիչ մեքենան լավ մշակի և սեր-

մը լավ տեղավորվեն հողի մեջ, ցանելուց առաջ այդպիսի հողամասը պետք է մշակել ծանր տափաններով կամ թաթավոր կուլտիվատորներով, վորպեսզի կեղևը վոչնչացվի:

Շարքահերկ մշակույթների ցելերն անհրաժեշտ է խուսելուց բերքը հավաքելուց հետո ազատել բերքի մնացորդներից (ծղոտներից և այլն) և մուխոտերով խիստ աղտոտված լինելու դեպքում անմիջապես վերամշակել թավալող մեքենաներով (արոտներով, գուլթաններով, բազմախոփերով):

Յեթե այդպիսի հողամասի կրկին անգամ վարելուց մինչև աշնանացանը մնացել է վոչ պակաս, քան 15 որ, այն ժամանակ ակոտների խորությունը պետք է լինի 15—18 սմ: Ավելի պակաս խորություն, այսինքն 12—15 սմ կարելի է թույլ տալ միայն հողամասի այն մասերում, վորոնք ազատ են բազմամյա արմատացանց մուխոտերից (տատասկափուշ, ցարասի, մուրկանի):

Կրկնավարից անմիջապես հետո պետք է կատարել տափանումը: Վոչ խոր հերկված կրկնավարում բերքը պակաս է լինում, անա թե ինչու ամեն մի կոլտնտեսության կամ խորհտնտեսության մեջ պետք է ձգտել շարքահերկ հողամասերը, վորոնք հատկացվելու յեն աշնանացանի համար, վորքան կարելի յե շուտ ազատել բերքից և անմիջապես նրանց հերկել պահանջված նորմալ խորությամբ, այսինքն 15—18 սմ: Այդ հանգամանքն ասում է, վոր անհրաժեշտ է համապատասխան ձևով կազմակերպել բերքի հավաքումն այնպես, վոր աշնարացանի համար հատկացվելիք շարքահերկ հողամասերը վորքան կարելի յե շուտ ազատել, վորովհետև նրանց ուշ ազատումը (չոր աշնան ժամանակ) հաճախ անհրաժեշտություն է դարձնում վոչ խոր վարել, վորը չի ապահովում հողամասերը մուխոտերից գերծ պահելը և առաջացնում է բերքատուլության պակասելու:

Մոլախոտերով վոչ շատ աղտոտված շարքայների հողա-  
մասերում աշնանացանի համար վարը պետք է կատարվի  
12 — 15 սմ խորությամբ:

Այդպիսով շարքահերկ հողամասերում աշնանացան կա-  
տարելիս, անհրաժեշտ է նկատի ունենալ՝

1. Մոլախոտերով ամենաաղտոտված հողամասերն ամե-  
նից առաջ աղտոել իրանց բույսերից, վորովհետև այդպիսի  
հողամասերը պահանջում են խորը վարել:

2. Արոտատեղերը և հացահատիկներով ցանված հողա-  
մասերն աշնանացանի հատկացնելու համար անհրաժեշտ  
է ըստ կարելույն ամեն մի միջոց ձեռք առնել վորքան կա-  
րելի յե շուտ նրանց արոտները կտրատելու և հետո նորից  
վարելու:

Հնարավոր չափով շուտ և մանրակրկիտ մշակելու վրա,  
առննձնապես ուշադրություն պետք է դարձնել, յեթե մա-  
նավանդ աշնանացանի համար մշակվելիք հողամասը ցան-  
ված է յեղել հասկավոր բույսերով:

Պետք է ինկատի ունենալ, վոր հասկային աշնանացանի  
համար հատկացվելիք ուշացած և ցածավորակ մշակված հո-  
ղամասերում զարգանում են մոլախոտերը, խիստ տարածվում  
են ֆլասատուները և այդպիսով տալիս են շատ պակաս բերք:  
Այդպիսի հողամասերում աշնանացան հացահատիկները  
վատ են զարգանում, վատ են ձմեռում և ֆլասավում են ժան-  
գերից ու ֆլասատուներից:

Այդ պատճառով հասկային հացահատիկներ ցանված  
հողամասերում աշնանացան կատարելու դեպքում, հողամասի  
վորքան կարելի յե շուտ մշակուժը խիստ կարևոր նշանա-  
կություն ունի:

Այստեղ, ինչպես ցույց են տալիս Կուբանի փորձնական  
կայանի փորձերը, 15 որյա ժամանակամիջոցը, հողամասի  
մշակելուց մինչև աշնանացանը կատարելը, արդեն անբա-  
վարար է: Այդ դեպքում հողամասի աշնանացանից 15 որ

առաջ կատարված մշակուժը բերքը պակասեցնում է զգալի  
չափով:

Այսպես, ըստ Կուբանի փորձնական կայանի կատարած  
փորձերի, աշնանացան ցորենի բերքը յեղել է.

### 1. Շաբահերկ հողամասում ցանելիս

Յերը հողամասը վարված է ցանելուց 1 ամիս առաջ 20,0

Յերը հողամասը վարված է ցանելուց 15 որ առաջ 19,3

Յերը հողամասը վարված է ցանելուց 1—2 որ առաջ 18,8

### 2 Հասկային հացահատիկ ցանած դասում ցանելիս

Յերը հողամասը վարված է ցանելուց 1 ամիս առաջ 20,0

Յերը հողամասը վարված է ցանելուց 15 որ առաջ 17,3

Յերը հողամասը վարված է ցանելուց 1—2 որ առաջ 17,0

Այդպիսով աշնանացանը հասկային հացահատիկներ ցա-  
նած դաշտում կատարելիս պետք է հողամասը ցանելուց  
վորքան կարելի յե առաջ վարել:

Համեմատարար մոլախոտերից մաքուր խոզանը ժա-  
մանակին վարելու դեպքում պետք է կատարել 15 — 16 սմ  
խորությամբ, իսկ մոլախոտերով ծածկված խոզանում 15 — 18  
սմ, վորովհետև մինչև ցանքսի ժամանակը հողը կարող է  
նստել և դրանից ծխերի դուրս մղվելն արդեն չի կարող  
առաջանալ: Ծխերի դուրս մղվելը կարող է առաջ գալ և այլ  
պատճառներից — ցրտի և տաքի նկատելի փոփոխումից, հողի  
ներսում սառցի շերտեր առաջանալուց և այլ պատճառ-  
ներից:

Կուբանի փորձնական դասի յերեմայա փորձն իսկապես  
հաստատում է, վոր աեմեակացան հացահատիկները հասկային  
հացահատիկներ ցանած խոզանում ցանելիս, նույնիսկ նա-  
խամեակում կատարելիս հերկվածի խորությունը չի կարող լի-  
նել ծանծաղ:

Յեւ ճիշտ, վոր Կուբանի փորձնական կայանի աշնանացան ցորենի բերքը խողանում ցանելու դեպքում հետեյակ պատկերն եր ներկայացնում.

	1929 թ.	1930 թ.	1931 թ.	Միջին
Գութանով 15 սմ. խորությամբ նա խամշակման դեպքում . . . . .	18,63	21,32	15,98	17,00.
Բազմախոր մերենայով 8 սմ խորությամբ նախամշակում կատարելու դեպքում . . . . .	13,9	20,77	15,48	16,74

Փորձնական կայանում նույնիսկ մոլախոտերից մաքուր և լավ մշակված հողամասում նախամշակումը վոչ խոր 8 սմ անելու դեպքում, առաջ է բերել բերքի նվազում: Բայրովիս պարզ է, վոր անմեակ յեվ մոլախոտերով ծածկված հողամասերում նախամշակումը ծանծաղ անելու դեպքում, բերքի նվազումը պես է յինի ավելի յեվս նկատելի:

Ահա թե ինչու աշնանացանը հասկավոր հացահատիկներ ցանած հողամասում անելու դեպքում, պետք է առանձին ուշադրություն դարձնել վորքան կարելի յե շուտ ազատել այդ հողամասերը բերքից և վորքան կարելի յե շուտ մշակում կատարել համապատասխան ձևով վարելով:

Այդ պայմանները չկատարելու դեպքում, աշնանացանի բերքը կնվազի:

Այսպիսով պշնանացանը շարքահերկ հողամասերում արոտատեղերում և հասկային հացահատիկներով բռնված հողամասերում ցանելիս պետք է այդ հողամասերը հերկել վորքան կարելի յե շուտ և պահանջված խորությամբ:

Սակայն, խորհոտնետություններում և կոլտնտեսություններում հունձից հետո, յերբ կատարվում է կալսումը և հա-

ցամթերում, ահա այդ շրջանում վոչ միշտ հաջողվում է վարը կատարել անհրաժեշտ խորությամբ:

Կուբանի փորձնական կայանի յերեք տարվա դիտողությունները ցույց են տալիս, վոր այն դեպքում, յերբ կատարվում է հնձած արտերի ծանծաղավարը հետագա ավելի ուշ անհրաժեշտ խորությամբ վարով, յերբ արդեն ազատ են լինում լծկանները, հնարավորություն է տալիս բավականին բարձր բերք նոտանալու:

Այսպես, Կուբանի փորձնական կայանի աշնանացան ցորենի բերքը յեղել է.

	1929 թ.	1930 թ.	1931 թ.	Միջին
Ծանծաղավարից 15 որ առաջ 15 սմ խորությամբ վարելու դեպքում	14,19	24,73	18,55	19,46
Միայն 15 որ ցանքսից առաջ 15 սմ խորությամբ վարելու դեպքում	14,88	22,77	14,13	17,26
Հողամասը ցանքսից մեկ ամիս առաջ 15 սմ խորությամբ վարելու դեպքում	14,78	23,17	22,07	20,00

Արտատեղերի ծանծաղավարի դեպքում նույն իսկ ուշացած վարը տալիս է այնպիսի բերք, վորը շատ հետ չի մնում ցանքսից մեկ ամիս առաջ 15 սմ խորությամբ արած վարից:

Արտատեղերի ծանծաղավարը, վորպես ավելի հեշտ և ավելի արագ կատարվող մշակում, հնարավորություն է տալիս նույն իսկ ուշ վարելու դեպքում, բավական բարձր բերք ստանալու: Հողամասը մոլախոտերով խիստ անոտոված լինելու դեպքում ծանծաղավարը հետագա խորը վարելու դեպքում պետք է վոր մոլախոտերի վոչնչացման նպատակով, ապահովի զավ բերքի ստացումը: Այդ մոլախոտերի, փասատուների և ժանգերի դեմ մաքանելու քիչ տարածված, բայց

ատ կարևոր միջոցի վրա պետք է դարձնել առանձին ուշադրութիւն:

Յեթե շարքահերկ և հացահատիկներ ցանած վաղ մշակված հողամասերում մինչ աշնանացանը բուսել են մուխտուտեր, լավ բերք ստանալու համար հողը պետք մշակել բազմախոփերով կամ թաթափոր կուլտիվատորներով: Մուխտուտերով բուսած վատ մշակված, նույնպես չտրորված հողամասերում լավ տեսակի վաք ստանալու և վարը հեշտացնելու համար պետք է նախ քան վարելը մուխտուտերը հնձել հավաքել և կամ այրել:

Նախամշակման նոր ձևերից, վոր նպաստում է բերքի բարձրացմանը, քացի ծանծաղավարից անհրաժեշտ է, վորտեղ վոր հնարավոր է, կատարել և ծղոտները այրում:

Այդ միջոցի վերաբերյալ Ոմսկյան փորձնական կայանի և Հյուսիսային Կովկասի հացահատիկային կայանի կատարած փորձերը ցույց տվին, վոր իսկապես ծղոտների այրումը բերքը բարձրացնում է:

Հյուսիսային Կովկասի հացահատիկային փորձնական կայանի դիտողութիւններով հաստատված է, վոր ծղոտների այրումը հողամասի աղտոտումը պակասեցնում է 7 անգամ:

Ռոստով-Նախիջևանյան փորձնական կայանի փորձերով հաստատված է, վոր ծղոտների այրումը նպաստում է 70 — 80% ծղոտների վրա ձմեռող հացահատիկային թրթուրների վոչնչացմանը:

Հստ ամերիկյան տվյալների, ծղոտների այրումը 40% նպաստում է մուխտուտերի թափված սերմերի վոչնչացման:

Բացի այդ, ինչպես ցույց տվին Հյուսիսային Կովկասի հացահատիկային կայանի դիտողութիւնները, այրումը շատ հեշտացնում է վարը և նպաստում է նրա վորակի լավ լինելուն:

Մզոցների այրման դեպքում անհրաժեշտ է անգայման մտածել հակահրդեհային խիտ միջոցներ ձեռք առնելու մասին:

առանց դրան այդ միջոցը կարող է առաջացնել անագին վնասներ:

Պետք է նկատի ունենալ, վոր ծղոտները լավ կայրվեն այն դեպքում, յեթե նրանք մաքուր են մուխտուտերից: Այդպիսով այրումը կարելի է կատարել խմլույն հնձելուց և բերքը դաշտից հավաքելուց անմիջապես հետո: Մուխտուտով բուսած յեղ կանաչած ծղոցներն ադդեմ չեն վառվում: Ահա թե ինչու խողանը մեծ հաջողութիւնով վառվում է հուսնից՝ վոչ ավել, քան 7 — 10 որ անց:

## ՍԵՐՄԱՑՈՒՅԻ ՊԱՏՐԱՍԵԼԸ ՅԱՆԵԼՈՒ ԶԱՄԵՐ

Իզուր չե, վոր դարավոր փորձը ստեղծել է միանգամայն ճիշտ ժողովրդական առածը, «վատ սերմից լավ ցեղ մի սպասի»:

Այն ինչ, սերմացուի ցանելու համար պատրաստման խնդրի վրա վոչ հաճախ լուրջ ուշադրութիւն է դարձվում:

Մաքուր, առողջ և լիաքաշ հացահատիկի գործադրութիւնն անհրաժեշտ է նրա համար, վոր զտված և ընտիր հացահատիկը նպաստում է՝

1. Լավ, ամուր և առողջ ծիլեր ստանալուն:
2. Ցանելու սերմացույի չափի ճիշտ նորման վորոշելուն:
3. Ցանելու ժամանակ սերմացույի հետ միասին մուխտուտերի սերմերը գետին չզցելուն:
4. Ավելի բարձր բերք ստանալուն:

Այդ պատճառով ել ցանքսից առաջ աշնանացան հացահատիկների ամբողջ սերմացուն պետք անցկացվի նախ մաղիչ-զտիչից և ապա տրիչից:

Սերմացուները մաքրելը և տրիչից անցկացնելն անհրաժեշտ է վոչ թե նրա համար, վոր ցանելու համար գոր-



ծաղրվեն միայն ամենախոշոր հացահատիկները, այլ նրա համար, վորպեսզի հեռացվին ավելորդ խառնուրդները, կոտրոված և վնասված հացահատիկները: Գոյություն ունեն կարծիքներ, վոր ամենախոշոր հատիկները ցանելու դեպքում (մանավանդ հաճարինը), վորը հաճախ պատահում է հասկերի հատիկներում մեջընդմեջ, առաջացնում է այդ յերեվույթի ուժեղացումը հետագայում:

Վերջին ժամանակներ մեզ մոտ, ԽՍՀՄ-ում հացահատիկները մաքրելու համար գործ են ածվում հացահատիկներ մաքրող բարդ գործիքները, վորոնք շարժման մեջ են դրվում մեքենաների միջոցով:

Այդպիսի գործիքներն ունեն մեծ արտադրողականություն, մի ժամում մաքրում են 2—4 տոնն հացահատիկ:

Հացացատիկները մաքրելուց հետո նրանց պետք է ախտահանիչ նյութերով հականեխել՝ թունավորումների վարակումից ազատ պահելու համար:

Հացահատիկները հականեխելու յերեք հիմնական միջոցներ կան — թաց, կիսաթաց և չոր:

Թաց հականեխման դեպքում գործածվում է ֆորմալինի լուծույթը: Լուծույթ ստանալու համար պետք է մեկ ծավալ ֆորմալինին ավելացնել 300 ծավալ ջուր, այսինքն 1 լիտր ֆորմալինին 300 լիտր ջուր կամ 1 շիշ ֆորմալինին 300 շ. ջուր:

Մեկ շիշ ֆորմալինով կարելի յե հականեխել 20—22 ցենտներ հացահատիկ:

Ֆորմալինի լուծույթով թրջված սերմացուն փնհրաժեշա է 2 ժամ շարունակ յենթարկել ֆորմալինի գոլորշիներին, վորպեսզի հացահատիկի մեջ դառնված թունավոր վորոմների սերժերը վորչնչանան: Այդ նպատակով ֆորմալինի լուծույթով թրջված սերմացուն հավաքում են կույտերով և ծածկում են քրիզենտներով կամ տոպրակներով:

Այդ ձևով հացահատիկը մնում է յերկու ժամ, վորից հետո հացահատիկը փոռում են բարակ շերտերով և սովերի

տակ չորացնում: Թաց հացահատիկը արելի տակ չորացնելի կարելի, վորովհետև այդ դեպքում ֆորմալինի գոլորշիներն ուժեղ թափով գոլորշիանալով, կարող են վնասել հացահատիկի սաղմը: Հացահատիկների ֆորմալին լուծույթով հականեխելը պետք է կատարել ցանելուց անմիջապես առաջ, ծայրահեղ դեպքում վորչ առաջ՝ քան 2 որ:

Թաց հականեխումը կատարելու համար գոյություն ունեն հատուկ մեքենաներ, իսկ նրանց բացակայության դեպքում հականեխումը կարելի յե կատարել ձեռքով, վորի ժամանակ պետք է շարունակ խառնել հականեխած հացահատիկներին շերտերը թիակներով:

Կիսաթաց հականեխման ժամանակ գործածվում է ֆորմալինի ավելի ուժեղ լուծույթ: Այդ լուծույթը հավասարաչափ սրսկվում է հացահատիկների վրա՝ շարունակ հացահատիկները թիակով շուռ տալով: Կիսաթաց հականեխման դեպքում մեկ ծավալ ֆորմալինին պետք է վերցնել 80 ծավալ ջուր: Մեկ լիտր այդպիսի լուծույթով կարելի յե հականեխել 72 — 75 կիլոգրամ հացահատիկ:

Ֆորմալինի լուծույթը հացահատիկների վրա առանձնապես հավասարաչափ կերպով պետք է սրսկել և շարունակ խառնել հացահատիկները:

Հացահատիկները թրջելուց հետո ծածկում են քրիզենտով կամ պարկերով շարունակ 4 ժամ: Հականեխումը կատարվում է ցանելուց անմիջապես առաջ:

Կիսաթաց միջոցով աշնանացան հացահատիկներից կարելի յե հականեխել միայն գարին: Յորենը է հաճաքը կիսաթաց միջոցով հականեխել չի կարելի:

Չոր հականեխման համար գործածվում են անջուր պղնձի արճասպ, ածխաթթվուտային պղինձ և հատուկ փոշի «АБ»:

150 գրամ «АБ»-ին կամ 200—250 գրամ ածխաթթվուտային պղնձին պետք է ավելացնել 300-ական գրամ անջուր պղնձի արճասպ (կատացվի մեկ լուծույթ):

Մեկ լուծույթով կարելի չէ հակահեխել մեկ ցենտներ հացահատիկ:

Կորեկի հակահեխելը չոր միջոցով կատարվում է հատուկ մեքենաների վրա դրած տակառների միջոցով:

Հացահատիկները լավ հակահեխելու համար անհրաժեշտ է նախապես լավ մաքրել փոշուց, կեղտերից և կողմնակի խառնուրդներից:

Մաքրած հացահատիկներն ախտահանող նյութի հետ միասին լցնում են մեքենայի տակառը, վորոնց մեջ կատարվում է հացահատիկների հակահեխումը:

Ըստ աշխատանքի, այդ մեքենաները լինում են ընդհատ և անընդհատ գործողության:

Ընդհատ գործողության մեքենաների շարքին են պատկանում «Բրեալ», «Պրիմուս», «Գլորուս», մեքենաները և սարքոցի վրա դրված տակառը: Մի քանի մեքենաների արտադրողականությունը հասնում է մինչև 10 — 12 ցենտներ մեկ ժամում, (որինակ «Պրիմուս» մեքենան):

Լավ հակահեխում ստանալու համար անհրաժեշտ է.

1. Մեքենայի արկղը ավել հացահատիկով չլցնել քան նրա <sup>2</sup>/<sub>3</sub> մասը:
2. Մեքենայի պլանակի պտույտների թիվը մեկ բոպեյում հասցնել մոտ 45-ի:
3. Հակահեխվող սերմացուն հակաթույնի հետ միասին 5 բոպեյից ավել չխառնել:

Անընդհատ գործողության մեքենաների մեջ սերմացուները և հակահեխվող նյութը լցնում և դուրս են թափում անընդհատ (այստեղից է և անուշը):

Անընդհատ գործողության մեքենաների շարքին է պատկանում «Պորեդա», վորի արտադրողականությունն է մեկ ժամում մինչ 20 ցենտներ, «Նեյգատոլ», վորի արտադրողականությունն է 15 — 18 ցենտներ մեկ ժամում և «ԱԵԾ»

№ 1 մեքենան, վորի արտադրողականությունն է մինչ 150 ցենտներ մեկ ժամում:

Չոր հակահեխվող նյութերը թունավոր են և վնասակար մարդու համար: Դրա համար էլ նրանց գործարժման դեպքում պետք է ձեռք առնել մի շարք նախազգուշացուցիչ միջոցներ (գործածել հատուկ դիմակներ, բերանը և քիթը ծածկել թրջած մաուլայով կամ թաշկիճակով, իսկ աչքերը ծածկել նախազգուշացնողական ակնոցներով):

Պետք է ի նկատի ունենալ, վոր վոչ վարպետ հակահեխումը կարող է վտանգավոր կերպով աղբի ծրման վրա: Այսեղ հնարավոր է հակախորհրդային օտրերի վնասաբարությունը: Դրա համար էլ հակահեխումը պեժ է կատարել հիթո կերպով հատուկ կազմած ինօսուկցիաների համեմատ յեվ հակահեխուման գործողությունը հանձնարարել ամենապորձված անձնավորություններին:


Աշնանացանի հավասար և լավ ծիլեր ստանալու համար սերմացուի ցանումը պետք է կատարել, հաշվի առնելով նրա վորակը: Առանց դրան, վորոշ հաստատված նորմայով ցանելով, կարելի չէ ստանալ կամ շատ ցանցառ և կամ շատ խիտ ծիլեր: Այն ինչ և՛ նվազեցրած նորման և՛ շատ բարձրը չեն ապահովում լավ բերք:

Սերմացուի ցանելու նորման վորոշելիս, կարելի է իմանալ հացահատիկի ծրման ունակությունը և տնտեսական պետքականությունը:

Դրա համար էլ (ավելի լավ է սերմերը հակաթույնի յենթարկելուց հետո) հացահատիկներից վերցնում են նմուշներ և վորոշում նրանց ծրմակության 0|0-ը և տնտեսական պետքականությունը, վորոնց համեմատ և վորոշում են սերմացուի նորման:

Վորովհետեվ յե՛վ քաց յե՛վ կիսաքաց հակահեխուման ժամանակ հակաբույնի յենթարկված հացահատիկը չի կարելի յերկտր պահել օտեմարաններում (պղպպի քան 3 օր), ուստի յուրևհալ

43/37-13



քյան յեվ անեսական պեճականության վորոճումը, ոճրւացունեքն այդ միջոցներով հակաքույնի յեճքարկելու ղեպճում, պեճ է վորոճել նախ քան հականեխուման գործողությունը:

Սերմերի ծրուակության 0%-ի ստուգումը կատարվում է սերմերի միջին նմուշները ծրեցման յինթարկելով:

Միջին նմուշներ ստանալու համար գործադրվում են հետևյալ միջոցները.

Յեթե սերմացուները գտնվում են պարկերի մեջ, այն ժամանակ ամեն մի պարկից — ներքևից, մեջտեղից և վերևից վերցնում են սակավաթիվ նմուշներ,

Յեթե պարկերը 20-ից պակաս են, նմուշները վերցնում են ամեն մի պարկից, իսկ յեթե 21—100 պարկ է, վերցնում է միայն 20 պարկից: Իսկ յեթե սերմացուն գտնվում է շտեմարանում, այն ժամանակ նմուշը վերցնում են անկյունից — միջից, ներքևից և վերևից: Նմուշ վերցնելու համար գործածվում են հատուկ գործիքներ — մխափ, իսկ այդ գործիքների բացակայության դեպքում նմուշը վերցնում են ձեռներով:

Վերցված նմուշները խառնում են և ստացվում է միջին նմուշ: Սերմացուի վորակը (ծրուակությունը և տնտեսական պեճականությունը) վորոշելիս, շատ կարևոր է հատկապես ունենալ միջին նմուշ, վորը բնորոշի վորոշ քանակության ամբողջ սերմացուի վորակը: Ահա թե ինչու սերմացուի վորակը վորոշելու համար, չի կարելի նմուշը վերցնել միայն մի տեղից:

Սերմացուի ծրուակությունը վորոշելու համար ստացված միջին նմուշը մաքրելուց և զտելուց հետո, հաշվում են և ծրեցնում: Ծրեցումը կատարում են մաքուր ավազով կամ փայտի թեփով լցված արձձի պատրաստած արկղիկներում, կապի ամաններում և կամ ափսեներում:

Սերմացուների ծրումը 3-րդ օրից սկսած գիտում են ամեն օր, ծրածները հեռացնում և հաշվում նրանց թիվը:

Յեթե տասներորդ օրվա վերջին, 100 սերմերից ծրել են 92-ը, այդ նշանակում է, վոր ծրունակությունը 92% է: Յեթե ծրել են 85 սերմ, ծրունակությունը 85% է և այլն:

Ծրած համարվում են այն սերմերը, վորոնց ծրելը սերմից  $1\frac{1}{2}$  — 2 անգամ յերկար են:

Ծրունակության ավելի ճիշտ 0% ստանալու համար, ավելի լավ է ստանձին ծրեցնել մի քանի հարյուր սերմացուներ: Ամեն մի հարյուրից ծրած սերմերի թիվը գումարել և գումարը բաժանել հարյուրակների թվին և այդպիսով ստանալ ծրունակության միջին 0%-ը:

Սերմացուի ցանելու քանակի նորման վորոշվում է սովորաբար նորմալ ծրունակություն ունեցող սերմերի համար, իսկ յեթե ծրունակությունը նորմալ չէ, ցանելու քանակի նորման էլ պետք է ավելացվի: Որինակ, նորմալ ծրունակության ժամանակ, այսինքն, յերբ ծրունակությունը 94% է, ցանելու նորման սահմանված է 120 կիլոգրամ ամեն մի հեկտարին, իսկ տվյալ տնտեսության մեջ սերմացուի ծրունակությունը միայն 80% է: Վորպեսզի վորոշենք տվյալ դեպքում վորքան հացահատիկ ցանելը, պետք է 120 կիլոգրամը բաժանել 80-ի և բազմապատկել նորմալ 0%-ի վրա, այսինքն՝

$$(120 : 80) \times 94 = 141 \text{ կիլոգրամ:}$$

Այդպիսով 80% ծրունակություն լինելու դեպքում ծրելի նորմալ քանակն ապահովելու համար, սովորական 120 կիլոգրամ նորմայի փոխարեն պետք է ցանել 141 կիլոգրամ:

Յերբեմն սերմացուն, ունենալով լավ ծրունակություն, պարունակում է իր մեջ մեծ քանակությամբ դժվար բաժանելի կողմնակի խառնուրդներ: Այդ դեպքում ցանելու քանակի ճիշտ նորման ստանալու համար ցանումը պետք է կատարել, հաշվի առնելով տնտեսական պեճականությունը:

Տնտեսական պեճականությունը վորոշելու համար, ամենից առաջ պետք է վորոշել սերմացուի մաքրությունը, վորը

վորոշվում է հետևյալ ձևով: Միջին նմուշից կշռում են 100 գրամ: Հացահատիկներից հեռացվում են կողմնակի խառնուրդները (քարեր, հարդի կտորներ, մոլախոտերի սերմեր, կոտրված հատիկներ), վորից հետո մնացորդը նորից առանձին կշռում:

Յեթե ընտրած (մնացածը) հատիկներին (յենթադրենք թե ցորենին) քաշը հավասար լինի 90 գրամի, այդ կլինի սերմի մաքրության ցուցիչը, այսինքն, սերմի մաքրությունը կլինի 90%:

Ավելի ձիշտ միջին մաքրություն ստանալու համար վերցնում են մի քանի քաշ 100-ական գրամ, վորոշում են նրանց մաքրության ցուցիչները, գումարում են նրանց և գումարը բաժանում քաշերի (100-ական գրամ) թվին:

Իմանալով սերմերի մաքրությունը և նրանց ծլունակությունը, շատ հեշտ է վորոշել նրանց տնտեսական պետքականությունը:

Իրա համար անհրաժեշտ է մաքրության ցուցիչը (թիվ) բազմապատկել ծլունակության ցուցիչով (թիվ) և ստացված թիվը բաժանել 100-ի: Այդպիսով ստացված թիվը կլինի տնտեսական պետքականությունը ցույց տվողը:

Ցորենի համար նորմալ տնտեսական պետքականությունը ցույց տվող թիվը համարվում է 93%<sup>0</sup>, իսկ հաճարինը 83%<sup>0</sup>:

Պետք է ինկատի ունենալ, վոր ցանելու քանակի նորմաները, վոր խորհուրդ են տալիս կիրառել վորձնական կայանները կամ վարչական մարմինները, ինկատի ունեն նորմալ տնտեսական պետքականությունը: Բարձր կամ ցածր տնտեսական պետքականություն գոյություն ունենալու դեպքում, սերմացուի ցանելու քանակի նորման պետք է ավելացնել կամ պակասեցնել:

Որ ինակ, աշնանացան ցորենի նորմալ տնտեսական պետքականությունը 93%<sup>0</sup>-է և յենթադրենք դրան համապա-

տասխանող ցանելու քանակի նորման 125 կիլոգրամ է մեկ հեկտարի վրա, իսկ 80%<sup>0</sup> տնտեսական պետքականություն ունեցող սերմացու ունենալու դեպքում, պետք է ցանելու քանակի նորման սովորականից բարձրացնել: Իրա համար սովորական նորման պետք է բազմապատկել սովորական տնտեսական պետքականության վրա և ստացված թիվը բաժանել տվյալ սերմացուի գոյություն ունեցող տնտեսական պետքականության վրա, այսինքն՝

$$(125 \times 93) : 80 = 145 \text{ կիլոգրամ:}$$

Նշանակում է 80%<sup>0</sup> տնտեսական պետքականություն ունեցող սերմացու ունենալու դեպքում, պետք է արդեն ցանել վոչ թե 125 կիլոգրամ, այլ 145:

Սերմացուի ցանելու քանակի նորմայի վորոշումը, ինկատի ունենալով ցանվելիք հացացատիկի վորակը, շատ մեծ նշանակություն ունի և այդ խնդրին ցանքսի նախապատրաստական աշխատանքների շրջանում պետք է ուշադրություն դարձնել:

## ԱՇՆԱՆԱՅԱՆ ՀԱՅԱՀԱՏԻԿՆԵՐԻ ՑԱՆՄԱՆ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Փորձնական կայանների կատարած աշխատանքներով և կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների լայնատարած պրակտիկայով հաստատված է, վոր սովորական շորքացան մեքենայով ցանելու դեպքում, ստացվում է աշնանացան հացահատիկների համար ամենալավ բերքը:

Այդ կարելի յե հաստատել նաև մեր յերկրային և հարեվան յերկրամասերի վորձնական կայանների աշնանացան ցորենի և հաճարի բերքատվության մասին ունեցած հետեվյալ տվյալներով:

Ցանման յեղանակները	Փորձական կայանների աճոււնները								
	Գունցի	Գովի	Ստափապոլի	Մախրմի-սվիկոլի	Կուրամի	Բոզույ (1/40)	Բալառնիկի կոլեկտիվի	Իստուլ-Նախիջիկան	Կրասնոկուտուի

Մեկ հեկտ. աշնանացան ցորենի բերքը ցենտներով

Ցրիվ տրված . . . . .	—	—	16,1	—	15,6	—	—	—	—
Համատարած շարքային . .	12,7	13,8	18,6	21,6	17,1	8,3	12,6	—	—
Լայնաշարք միաշերտ . . .	13,1	12,3	—	19,6	—	7,7	11,8	—	—
Լայնաշարք յերկաշերտ . . .	14,4	13,3	—	21,3	—	7,4	11,7	—	—

Մեկ հեկտ. աշնանացան համարի բերքը

Ցրիվ տրված . . . . .	—	—	—	—	—	—	17,8	17,3
Շարքային . . . . .	15,6	19,8	—	—	—	—	26,5	21,2
Լայնաշարք . . . . .	10,8	19,6	—	—	—	—	25,1	19,8

Վերևում բերված տվյալներից յերևում է, վոր.—

1. Ցիրուցան ցանքսը տվել է ամենապակաս բերքը:

2. Առանձին դեպքում լայնաշարք ցանքսերը տվել են մի քիչ ավելի բարձր բերք քան համատարած շարքային, բայց նրանք պահանջում են մոլորխոտներից շատ մաքուր միջշարքային հողամշակում: 3) Համարյա բոլոր փորձնական կայանների տվյալները խոսում են հողուտ համատարած շարքային ցանքսի մասին:

Կուրամի փորձնական կայանը յերկու տարի շարունակ համեմատում եր խոփափոր և դիսկավոր ցանող մեքենաների միջոցով ցանելու դեպքում ստացված բերքը և ստացված տվյալներն ասում են, վոր բարձր բերք ստացվում է դիսկավոր մեքենայի միջոցով ցանելիս:

Այսպես աշնանացան ցորենի բերքը յերկու է.—

1931 թ. 1932 թ. Միջին

Խոփափոր մեքենայով ցանելիս . . . . .	26,5	10,7	18,6
Դիսկավոր մեքենայով ցանելիս . . . . .	27,8	10,9	19,4

Այսպիսով կոչտ, վատ մշակված հողամասերում պետք է գերադասության տալ դիսկավոր ցանիչ մեքենաներին:

Դիսկավոր ցանիչ մեքենաները վատ մշակված դաշտերում պարտական են տալ ավելի լավ աշխատանք:

Առանձին փորձնական կայանների տվյալների համաձայն, աշնանացանի տափանելը նպաստում է բերքի բարձրացմանը:

Այսպես, աշնանացան ցորենի բերքը յերկու է.—

	Դանի տարվա փորձը	Աշնանացան	
		Տափանելու	Առանց տափանելի
Ռոստով-Նախիջ. փորձ. կայան . . .	1 տ. (1950 թ.)	28,0	24,5
Ցեգորյիկսկու դաշտը . . . . .	1 տ. (1930 թ.)	18,6	17,6
Հ. Կով. հացահատ. փորձ. կայան . .	1 տ. (1932 թ.)	12,2	8,8
Պրիկուսկու փորձ. կայան . . . . .	1 տ. (1929 թ.)	17,7	9,5
» » » . . . . .	1 տ. (1930 թ.)	16,1	15,3
Մայիսնեկյան փորձ. կայան . . . . .	2 տ. (1930-31 թ.)	2,0	21,3
Կուրամի փորձ. կայան . . . . .	1 տ. (1929 թ.)	22,4	21,6
» » » . . . . .	1 տ. (1931 թ.)	21,9	23,6

Փորձնական կայանների մեծամասնություններում, մանավանդ այն կայաններում, վորոնք գտնվում են չոր ու յոյներում, աշնանը ցանքսերի տափանելը նպաստում է բերքի բարձրացմանը:

Տափանելը չպետք է իչարը գործ դնել, վորովհետև այդ միջոցը հաճախ գործածելու դեպքում, կարելի յե հողն ավելորդ չափերով մանրացնել, բայց վաս, ուս մեակված չոր հրդեհում տափանելը պետք է վոր բարձրացնի աճանացան հացահատիկների բեքթասվոր յյունը:

Տափանելը կատարվում է սեպավոր, հարթ փայտյա նեկ տախտակներ դամած տափաններով (սպիավոր հարթիչով)՝ Պետք է յենթադրել, վոր տափանելը կպահպանի աշնանա-

ցանը վտանգից, ձմերելու ժամանակ այն տարիները, յերբ աշնանացանը յենթարկված է ծիլերը դուրս մղելու վըտանգին:

Աշնանացանը հաջող ձմերելու դեպքում բերքատուլութունը ավելացնում են այն դեպքում, յեթե ցանքսից անմիջապես հետո կատարվում է ցաքանումը, սակայն, գոյուլութուն ունեն դիտողութուններ, վոր անբարեհաջող տարիներում աշնանացանը ավելի լավ ձմեռում է այն դեպքում, յերբ դաշտը ցանքսից հետո չի ցաքանվում: Հաշվի առնելով այդ, աշնանացան ցանքսերն ավելի լավ ձմերելու համար պետք է թողնել առանց ցաքանելու:

## ԱՇՆԱՆԱՅԱՆ ՀԱՅԱՀԱՍՏԻԿՆԵՐԻ ՀՈՂԻ ՄԵՁ ԹԱՂԵ- ԼՈՒ ԽՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Աշնանացան հացահատիկների ցանելու ժամանակ, հողի մեջ ինչ խորության թաղելու հարցի վերաբերյալ գոյութուն ունեն տարբեր կարծիքներ:

Այդ խնդրի վրա շատ են աշխատել առանձին փորձնական կայաններ ու գիտնականներ և մեզ մոտ ԽՍՀՄ-ում և արտասահմանում:

Վոմանք կարծում են, վոր աշնանացան հացահատիկները հողի մեջ պետք է վորքան կարելի յե վոչ խորը թաղել, վորովհետեւ վոչ խորը ցանելու դեպքում ծիլերը շուտ դուրս կգան և աշնանացանը իրան լավ կզգա: Ուրիշները, ընդհակառակն, ասում են, վոր աշնանացանի հատիկները վորքան խորը թաղվեն հողի մեջ, այնքան լավ կձմերեն:

Տարբեր կարծիքներ լինելը բացատրվում է նրանով, վոր հացահատիկների թաղելու խորության մասին յեղած փորձերը կատարվում են տարբեր յեղանակներով տարիներում և

տարբեր տեղերում՝ տարբեր տեսակի վարելահողերում, այստեղից և արդյունքներն ստացվել են տարբեր:

Աշնանացան հաճարի հետ փորձեր կատարելով հաստատել են, վոր բույսի հատիկներն ինչքան ել խորը չցանեն, բայց և այնպես հենց հողի յերեսի մոտ կազմում են ճուղավորման յերկրորդ հանգույցը: Կարծես թե հաճարը ձգտում է դեպի լույսը և ողբ: Դրա համար ել հաճարի սերմերը պետք է թաղել վորքան կարելի յե հողի յերես, բայց վորոշ սահմանի, այնքան, վոր նրանք ընկնեն խոնավ հողի մեջ, այսինքն մոտ 4 — 5 սմ խորության: Բոլորովին հողի յերես ել չի կարելի ցանել աշնանացան հաճարը: Շատ յերես ցանելու դեպքում կառաջանան վտանգներ հետեվյալ յերեվութներից.

1. Աշնանացանի չամբացած ծիլերը կարող են խիստ վտանգվել աշնանը և գարնանը փչող քամիներից:

2. Հացահատիկների յերես ցանելու դեպքում, աշնանացան հաճարի ծիլերը կարող են յերեվան գալ հողի վերին շորացած շերտերում, վոր նամանավանդ վտանգավոր է վաղ գարնան շրջանում (աշնանացանների զարթնելու ժամանակ) և ընդհանրապես գարնանը, յերբ բույսի արմատները թույլ են զարգացած:

3. Անբարեհաջող ձմերելու դեպքում աշնանացան հաճարը, չնայած իր դիմացկունության, կարող է նույնպես խիստ քիսավել (ցանցառանալ, նույնիսկ բոլորովին վոչնչանալ):

Հաշվի առնելով այդ հանգամանքը, աշնանացան ցորենի սերմերը պետք է վորքան կարելի յե խորը ցանել գետնի մեջ, վորպեսզի ապահովված լինի նրա անվտանգ ձմերելը: Աշնանացան ցորենի սերմերը հողի մեջ թաղելու ամուր (մերձ կուրանյան) հողերում սերմերը պետք է ցանել մի քիչ պակաս խորը, (4 — 5 սմ), իսկ կակուղ հողերում — խորը (5 — 7 սանտիմետր): Աշնանացան ցորեն ցանելու

դեպքում պետք է լավ հիշել, վոր վնասակար է սերմերի ինչպես չափազանց խորը, այնպես էլ չափազանց վոչ խորը ցանելը: Ետտ խորը ցանելու դեպքում սերմերը տալիս են թույլ ծիլեր, վորոնք հաճախ դուր չամբացած ձմեռ են մըտնում և վնասվում:

Բացի այդ, սերմերի ցանման խորությունը վորոշելիս, պետք է հաշվի առնել գոյություն ունեցող յեղանակը և վարելահողի դրությունը: Յեթե յեղանակը չոր է և հողը չորացել է, այն ժամանակ վորքան կարելի յե խորը պետք է ցանել: Անձրևային յեղանակների ժամանակ, յերբ հողը խոնավ է, սերմերը ցանում են վոչ խորը (բայց վոչ պակաս խորը՝ քան վերեվումն է ասված):

Չոր յեղանակին ցանված ցանքսերի ծիլն արագացնելու համար ոգտակար է աշնանացանը տափանել:

Աշխատանքի լավ վորակի և բերքի բարձրացման համար կրթանտեսություններում և խորհանտեսություններում մըղ-վող կուրվը պահանջում է բարձրավորակ ցանքս: Աշնանացան հացահատիկների ցանման խորության հարցին առհասարակ լուրջ ուշադրություն չեր դարձվում: Այն ինչ, աշնանացան հացահատիկների ցանման խորությունն ունի շատ մեծ նշանակություն, նրանց անվնաս ձմեռելը և լավ բերքը ապահովելու տեսակետից: Հենց այն պատճառով, վոր նայելով ցանված դաշտերին և նույնիսկ ծիլերին, մի անդամից դժվար է ասել, ուղիղ է ցանված թե սխալ — այդ ինչորի վրա պետք է առանձին ուշադրություն դարձնել:

Առաջին հայացքից կարելի յե ունենալ կարծես թե լավ ցանված հողամաս, բայց սերմերը շատ խորը ցանված լինելու դեպքում կցածրանա բերքատվությունը, նույնիսկ կարող է բոլորովին փչանալ: Չափազանց յերես ցանելու դեպքում (մանավանդ աշնանացան ցորենը) կարելի յե աշնանից ունենալ շատ լավ ծիլեր, բայց կարող է պատահել վոչ բարեհաջող ձմեռում և աշնանացանը գորնանը շատ

կցանցառանա, նույնիսկ, կարող է պատահել, բոլորովին վոչնչանալ:

Ահա թե ինչու անհրաժեշտ է մինչև ցանելն ամբողջ ժամանակ հետեվել, վոր հացահատիկները ցանվին պահանջված խորությամբ և հավասարաչափ: Ահա թե ինչու հսկողությունը ցանքսի վրա պետք է դնել արժանի բարձրության վրա: Վոչ բավարար դասակարգային արթնությունը կարող է հակախորհրդային տարրերի ձեռներն արձակել, վորի հետեվանքով արտաքինով լավ ցանքս ունենալով բերքը կլինի ցած, իսկ յերբեմն կարող է և բոլորովին վոչնչանալ ցանքսը:

## ԱՇՆԱՆԱՅԱՆ ՀԱՅԱՀԱՏԻԿՆԵՐԻ ԾԱՆԲՍԻ ԺՄՄԱՆԱԿԱՄԻՋՈՑՆԵՐԸ ՅԵՎ ՆՈՐՄԱՆԵՐԸ

Աշնանացան հացահատիկի իր ժամանակին և ճիշտ նոր-ժայով ցանելը շատ խոշոր նշանակություն ունի:

Յանքսի ժամանակամիջոցից և նորմայից կախված է.

1. Ժիր, ամբակազմ և հավասար ծիլերի ստանալը:

2. Լավ ձմեռելը:

3. Աշնանացանի լավ պաշտպանվելը վնասատուներից և հիվանդություններից:

4. Հաստատուն և բարձր բերքի ստանալը:

5. Մոլախոտերի ճնշելը:

Իր ժամանակին և ճիշտ նորմայով ցանելու առանձին կարեվորությունն ստիպում է այդ կարեվորագույն աշխատանքի վրա առանձին ուշադրություն դարձնել:

Անկասկած է, վոր 1933 թվականին ես, ինչպես 1932 թվին, Չարգուփշուր յեղած կուլակության մնացորդները լավ իմանալով ցանքսի ճիշտ ժամանակին և նորմայով կա-

տարելու նախորդ կարեւորութիւնը, պետք է աշխատեն արգելք հանդիսանալ աշխանացանի հաջող կատարմանը, նրա ժամանակին և ճիշտ նորմայով դրականացմանը:

Ահա թե ինչու կուսակցութեան և խորհրդային իշխանութեան անձնակեր կոլտնտեսական ակտիվի, խորհրտեսակական բանվորների և ՄՏԿ-ի ամբողջ ուղղորութիւնը պետք է մոբիլիզացիայի յենթարկվի, արմատախիլ անելու դասակարգային թշնամու փորձը՝ վիժեցնել Յերկրային Գործադիր կոմիտեյի սահմանած ժամանակամիջոցները և նորմերը աշխանացանի վերաբերյալ:

Դասակարգային բարձր արբնութիւնը յեզ աճեցնացանի բոլոր պայմաններէ խստիվ կատարման վերաբերյալ մղված պայքարը — աճեցնացանից լավ բեք ստանալու հիմն է կազմում:

Աշխանացան հացահատիկների համար, ինչպես ցույց են տալիս յերկրային և ԽՍՀՄ կից յերկրամասերի փորձնական կայանների դիտողութիւնները, նմանապես և առաջնակարգ կոլտնտեսութիւնների և խորհրտեսութիւնների պրակտիկան, շատ կարեւոր է ճիշտ կերպով վորոշելու ժամանակը, վորի ընթացքում ցանելը կապահովի աշխանացանի լավ ձեւերը և ամենաբարձր բերքը:

Աշխանացան անելիս պետք է լավ հիշել, վոր ինչպես շատ վաղ ժամանակամիջոցները, այնպես եւ շատ ուշ ժամանակամիջոցները չեն տալիս լավ բերք: Ամեն մի տեղի համար, կախյալ յեղանակների պայմաններից և հողի առանձնահատկութիւններից, գոյութիւն ունի վորոշ ժամանակամիջոց (ամենաշուտ և ամենաուշ ցանելու ժամանակների մեջտեղը), վորի ընթացքում աշխանացանը կատարելն ամենալավն է:

Ամեն մի տեղի համար, յեթե դիտողութիւններ կատարենք մի շարք տարիներ շարունակ, կարելի կլինի բավական ճիշտ կերպով հաստատել, վոր վորոշ ժամանակամիջոց-

ներում (սովորաբար միջին) կատարած աշխանացանն ավելի հաջող է լինում: Ճիշտ է, լինում են առանձին տարիներ, յերբ վաղ ժամանակամիջոցները տալիս են լավ բերք, լինում են և տարիներ, յերբ ուշ ժամանակամիջոցները տալիս են լավ բերք, բայց սովորաբար վոր վաղ և վոր եւ մանավանդ ուշ ցանածները տալիս են քիչ բերք: Մտնավանդ անհուսալի յեմ ուս ժամանակամիջոցում ցանածներ: Դրա համար եւ, յեթե այս կամ այն կոլտնտեսութիւնը կամ խորհրտեսութիւնն իր կենդանիների և ինվենտարների պահասութեան պատճառով աշխանացանը չի կարողանալու լավ ժամանակամիջոցին վերջացնել, այն ժամանակ աշխանացանը պետք է սկսել սովորականից մի քիչ ավելի շուտ:

Իսկ յեթե աշխանացանը կատարվում է խիստ շուտ, այն ժամանակ նկատվում է հետևյալը.

1. Վաղ ժամանակամիջոցներում ցանված աշխանացանը շատ վնասվում է վնասատուներից, մանավանդ գեսսեկայն և շվեդական ճանճերից: Այդ ճանճերը մանավանդ զարգանում են այն տարիները, յերբ բերքի հավաքմանը հետևում է խոնավ յեղանակներ և յերբ դաշտերում նկատվում են մոլախոտերի թափված սերմերից՝ դուրս յեկած շատ կանաչներ: Այդ ճանճերը մանավանդ վտանգավոր են համարվում հյուսիս-արեւմտյան ուղիներում (Շախտ քաղաքից դեպի հյուսիս) և հանքային ջրերի մոտերքը գտնվող հողամասերում: Այդ տեղերում, մանավանդ այն տարիներում, յերբ բերքի հավաքումից հետո՝ խոնավ յեղանակներ են լինում, պետք է խուսափել սահմանված ժամանակից շուտ աշխանացան (ցորեն) կատարելը:

2. Վաղ ժամանակամիջոցներում ցանված աշխանացանը յերբեմն շատ արագ զարգանում է աշխանը և շատ շուտ է յենթարկվում վտանգի:

3. Վաղ ժամանակամիջոցներում ցանված աշխանացանը բարեհաջող պայմաններում և շատ ուժեղ զարգանում է (յեր-



կարում ե) իսկ հետագայում չոր յեղանակներ լինելու դեպքում յենթարկվում ե այրման:

4. Վաղ ժամանակամիջոցներում ցանած աշնանացանն ալելի շատ ե հիվանդանում ժանգով, մանավանդ այն տարիներում, յերբ նա մասսայական կերպով տարածված ե:

Բայց մեկ անգամ ես պետք ե հիշեցնել վոր ուշ ժամանակամիջոցները, չառաջացնելով աշնանացանի համար զարգացման անհրաժեշտ պայմաններ, ալելի ես անբարեհաջող կերպով են ազդում բերքի վրա ե շատ ցանցառ ծիլեր ետալով, նպաստում են դաշտը մոլախոտերով ծածկելու:

Ահա թե ինչու ամեն մի կոլտնտեսություն ե ամեն մի խորհանտեսություն պարտական են կովել աշնանացանն ամենալավ ժամանակամիջոցներին կատարելու համար ե միայն այն դեպքում, յերբ հաստատվի, վոր տվյալ տնտեսությունը չի կորող ապահովել յուր ժամանակին ցանքսը, այն ժամանակ միայն պետք ե կատարել մի քիչ ալելի վաղ ժամանակամիջոցներում:

Հացահատիկների ցանելու նորմալ քանակությունը նորմայով սահմանելիս, պետք ե հաշվի առնել այն դրությունը, վոր, ինչպես շատ բարձր նորմաները, այնպես ել մանավանդ չափազանց պակասեցրած նորմաները չեն ապահովում լավ բերք: Բարձր նորմաները տալիս են խիտ ծիլեր, վորոնք ճիշտ ե, լավ են ձմերում, բայց հետագայում խիտ ծիլերը հաճախ վնասվում են այրվելուց, ժանգից ե պառկելուց:

Պակասեցրած նորմաներն ընդհակառակը չեն ապահովում լավ ձմերում, իսկ ներկայումս այդպիսի դաշտերը խիստ բանում են մոլախոտերով, ցորենի հասունանալը ձգձգվում ե ե լինում ե անհավասարաչափ:

Ահա թե ինչու ցանքսը ամենալավ ժամանակամիջոցներում կատարելով, պետք ե միեւնույն ժամանակ ուշադրություն դարձնել ցանքսի ճիշտ նորմայով կատարելու վրա:

Ցանելու նորման սահմանվում ե, ի նկատի ունենալով սերմացույի վորակը: Սովորաբար հիմնվելով փորձնական կայանների տվյալների ե առաջնակարգ կոլտնտեսությունների ու խորհանտեսությունների պրակտիկայի վրա, ցանելու նորմաները սահմանում են հողագործական մարմիններն ըստ ուայոնների: Նրանց կատարելը պետք ե լինի պարտադիր:

Ամեն մի կոլտնտեսության ե խորհանտեսության դերը կայանում ե միայն նրանում, վորպեսզի գոյություն ունեցող սերմացուների վորակի հաշվառման հիման վրա, ճիշտ կերպով պահպանել հողավարչական մարմինների սահմանած նորման, իսկ անհրաժեշտ դեպքում ճշտել այն, թույլ չտալով բարձր ե պակասեցրած նորմաներ:

Աշնանացանն ալելի ուշ ժամանակամիջոցներում կատարելիս, անհրաժեշտ ե սովորական նորմաները մի քիչ ալելացնել, վորովհետեւ այդ դեպքում նկատվում ե աշնանացանի մեծ չափով ցանցառացում ձմերելու ժամանակ:

Այդպիսով ալելի ու ե կատարած ցանքսը ոգտակար չե նայել նեա եամար, վոր պահանջվում ե լրացուցիչ սերմերի ծախսում:

Յերկրային փորձնական կայանների տվյալների հիման վրա, աշնանացանը ցանելու ժամանակամիջոցների ե նորմաների ազդեցությունը բերքատվության վրա, նյութի ուսումնասիրության ե կոլտնտեսությունների ու խորհանտեսությունների պրակտիկայի վրա, հաշվի առնելով Հյուսիսային կովկասի դանազան ուայոնների պայմանները ե դաշտերի դրությունը, կարելի յե սահմանել որինակելի ամենալավ ցանքսի ժամանակամիջոցները ե նորմաները:

Պետք ե ի նկատի ունենալ, վոր փորձնական կայանների պայմաններում, զործադրված նորմաների անմիջական կիրառումը կոլտնտեսություններում ե խորհանտեսություններում դաշտերի ներկա դրությամբ ճիշտ չի լինի: Փորձնական կայանների դաշտերը լավ մշակված են ե համեմատաբար մաքուր են մոլախոտերից ե փորձերն ել կատարվել

են վոչ մեծ հողամասերի վրա, վորտեղ գոյությունն է ունեցել բարձր ագրոտեխնիկա և ցանվել է բարձր վորակ սերմ: Այդպիսի պայմաններում աշնանացան հատիկները տվել են ամենաշատ քանակութեամբ ծիւր և կատարվել է նրանց հետագա ամենալավ զարգացումը: Բոլորովին պարզ է, վոր արտադրութեան պայմաններում, վոր գոյությունն ունի հաճախ շատ աղտոտ, մոլախոտերով ծածկված դաշտերում, ուր ցանվում են հաճախ վոչ լավ տեսակի սերմացուներ, կիրառել փորձնական կայանների պայմաններում գործադրված նորմաները վոչ մի դեպքում չի կարելի:

Այդ տեսակ գրութեանը կարող է հասցնել միայն սխալին, վոր արդեն իսկ թույլ են տվել շատերը, յերբ փորձնական կայանների տվյալները, վարելու խորութեան մասին, փորձնական կայաններից առանց մտածելու փոխադրվել են արտադրութեան պայմաններում: Խորհանտեսութեաններում և կոլտնտեսութեաններում վոչ խորը վարելու անմտածված փոխադրութեանը, վորը փորձնական կայանների պայմաններում տալիս էր բավական բարձր բերք, տվել է այն հետեւանքը, վոր չափազանց աղտոտվել են դաշտերը և ցածրացել է բերքը: Ահա թե ինչու փորձնական կայանների ցանելու նորման և արտադրութեան պայմաններում պետք է մի քիչ ավելացվեն, վորովհետեւ հակառակ դեպքում կըստացվի ցանցառ ծիւր և մոլախոտերի զարգացում: Ահա թե ինչու արտադրական պայմաններում ցանելու նորման քանակներին, պետք է հաշվի առնել խորհանտեսութեանների և կոլտնտեսութեանների փորձն ու պրակտիկան և նմանապես դաշտերի դրութեանը, թե վորքան նրանք մշակված են և մոլախոտերից ազատ: Պետք է ի նկատի ունենալ վոր կակուզ և վոչ պողատու հողերում սովորական նորմաներ պետք է մի քիչ պակասեցնել (10 — 20<sup>0</sup>/<sub>0</sub>), իսկ ավելի ուշ ժամանակամիջոցներում ցանելու դեպքում, յերբ ստեղծվում են պակաս բարեհաջող պայմաններ աշնանացան հացահա-

տիկների զարգացման համար, ցանելու նորման պետք է մի քիչ ավելացնել:

Յերկրային Կոմիտեյի և Յերկրային Գործկոմի 1933 թ. ոգոստոսի 2-ի վորոշման II կետում ասված է. «սահմանել ցանքսի հետեւյալ մոտավոր ժամանակամիջոցները. հյուսիսային ռայոնների համար՝ ոգոստոսի 20-ից մինչև սեպտեմբերի 20-ը, Կուրանի համար՝ սեպտեմբերի 15-ից մինչև հոկտեմբերի 10-ը (ի բացառյալ ծովափնյա ռայոնները, վորտեղ ժամանակամիջոցը յերկարացնել մինչև 20 հոկտեմբերի), արեւելեյան ռայոնների համար՝ սեպտեմբերի 1-ից մինչև հոկտեմբերի 1-ը»:

Այդ վորոշումը պեժ է կատարվի անպայման, վորովհետեւ վերոհիշյալ ժամանակամիջոցների անբերի իրականացումն ամենաբարձր բերք ստանալու գրավականն է:

Ի նկատի ունենալով վերոհիշյալ վորոշումը և նմանապես հաշվի առնելով փորձնական դաշտերի տվյալները և կոլտնտեսութեանների ու խորհանտեսութեանների գործնական փորձը, կարելի է հանձնարարել ցանքսի հետեւյալ ուղտիմալ ժամանակամիջոցները:

1. Հյուսիսային, Գոնո-Գոնեցկի ռայոնների համար — ոգոստոսի 20-ից մինչև սեպտ. 20-ը:

2. Կենտրոնական և Արևելա-Ստավրոպոլի ռայոնների համար — սեպտ. 1-ից մինչև սեպտ. 30-ը:

3. Կարաբ. Բալկ. ինքնավար մարզի համար — Մողղոկի, Գեորգիևսկու, Հանքային ջրերի, Յեսսենտուկու և Ուրադնենսկի հարավային մասի ռայոնների համար — սեպտ. 15-ից մինչև սեպտ. 30-ը:

4. Պրիկուսկի և Վորոնցովո-Ալեքսանդրովսկու ռայոնների համար — սեպտ. 15-ից մինչև հոկտեմբ. 10-ը:

5. Չեչենական ինք. մարզի, Ոսեթիայի ինք. մարզի և Ինգուշական ինք. մարզի համար սեպտ. 20-ից մինչև հոկտեմբերի 10-ը:

6. Հարավ-արևմտյան, Ստավրապոլի և Արևելա-Կուբանի առյուծների համար — սեպտ. 15-ից մինչև հոկտեմբ. 15-ը:

7. Մայկոպի և Արևմտա-Կուբանի առյուծների համար սեպտ. 20-ից մինչև հոկտեմբ. 20-ը:

## ԱՇՆԱՆԱՑԱՆԻ ՀԱԶՈՂ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԼԱՎ ԲԵՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՄՓՆ Ե ԿԱԶՄՈՒՄ

Աշնանացանի հաջող և բարձրավորակ կատարումը կազմում է աշնանացան հացահատիկների հաստատուն և բարձր բերք ստանալու հիմքը:

Աշնանացանի հսկիչ թվերի վորոշման մեջ Յերկրային Կոմիտեն և Յերկրային Գործկոմը ոգոստոսի 2-ին մատնանշեցին.

«Առնանցանի հիմնական խնդիրը հնամաքի մեջ յերկրամասի գյուղատնտեսական հետամնացության վերջնական լիկվիդացիան յեվ կազմակերպել ցանքի այնպիսի վորակ, վորք ապահովի պայթար դառնելի արդոսման դեմ յեվ սեղծի բերքի բարձրացման յեվ հավաքման նորմայ պայմաններ»:

Ընդգծելով Յերկրային կուսակցական կազմակերպությունից ձեռք բերած հաջողությունները գարնանացանի կատարման գործում, դժվարությունների հաղթահարման և դասակարգային թշնամու կազմակերպած սարքոտաժը ջախջախելու գործում, շնորհիվ Կենտկոմի ոգնություն, քաղբաժինների կազմակերպության և նույնպես յերկրի գյուղատնտեսությունից հաջող տեխնիկական զինվածություն և կուլտնտեսական մասսաների արտադրական առողջ տրամադրություն, վոր ստեղծել և նոր պայմաններ գյուղում — Յերկրկոմը և Յերկրգործկոմը մատնանշում են, վոր գյուղի նոր պայմանները հնարավորություն են տալիս առնանցանի

կամպանիան ավարտել ամենակարճ ժամանակում, զգալիորեն յավացնելով առնանցանի վորակը»:

Յուրաքանչյուր կուլտնտեսություն և խորհրդատեսություն պիտի վճարար պայքարի Յերկրկոմի և Յերկրգործկոմի վորոշման իրագործման համար, տարվ բարձր բերքի համար մղված պայքարի իսկական բոլշևիկյան նմուշներ: Դասակարգային զգոնություն բարձրացման, սոցմրցման և հարվածայնություն լայն ծավալման, աշխատանքային դիսցիպլինայի բարձրորակ աշխատանքի համար մղվող պայքարի նշանաբանով, յերկրային կուլտնտեսություններն ու խորհրդատեսություններն այս տարվա աշնանացանի ժամանակ հաստատ հիմք պիտի դնեն 1934 թվի աշնանացան հացբույսերի բարձր բերքն ապահովելու համար:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒՔՅՈՒՆ

Աշնանացանի կամպանիայի նշանակութունը . . . . . 3  
Աշնանացան հացահատիկների բարձր և հաստատուն բերք  
ստանալու հիմնական ագրոտեխնիկական պայման-  
ները . . . . . 5  
Հողմասի նախացանյան մշակումը . . . . . 6  
Մերմացույի պատրաստելը ցանելու համար . . . . . 13  
Աշնանացան հացահատիկների ցանման յեղանակները . . 21  
Աշնանացան հացահատիկների հողի մեջ թաղելու խորու-  
թյունը . . . . . 24  
Աշնանացան հացահատիկների ցանքսի ժամանակամիջոց-  
ները և նորմաները . . . . . 27  
Աշնանացանի հաջող կատարումը լավ բերք ստանալու  
հիմքն և կազմում . . . . . 34



3406  
С—X



Ответственный редактор А. Г. АВАКЬЯН  
Технический редактор Г. М. МАРКАРЯН  
Сдано в набор 2|IX 1933 г.  
Подписано в печать 13|IX 1933 г.  
Статформат Б6 125x176  
Уполкрайлита № Б 444  
Типография им. „Стачки 1902 г.“ СККПТ  
в Ростове на-Дону  
Об'ем 1 1/2 п. л. Заказ № 4350, Тираж 2000



18 452

102

ср 1  
ср 2



На армянском языке

Д. И. МЕДВЕДЧУК

АГРОТЕХНИКА ПОСЕВА  
ОЗИМЫХ ХЛЕБОВ

И-во „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

ԳՐԱԳՈՒՀԵՍԵՐ

ԻՐԱՆՈՎ-ԴՈՆ ՄՈՍԿՈՎՍԿԱՍՈ ՓՈՂ. № 53  
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՑԵՆՏՐ)